ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

08.02.2022թ. թվականին կնքված N ԿԴՄՀՀ-ԲՄԱՊՁԲ-22/4-1 գնման պայմանագրի

ք. Երևան «24» 03 2022թ.

«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Կ. Ղազարյանի, ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Բրիդջ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն՝ Ն. Չախոյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 08.02.2022թ. կնքված N ԿԴՄՀՀ-ԲՄԱՊՁԲ-22/4-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ծառայության ձեռքբերման համար հատկացված 60000000 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 1-ով ներկայացված Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված «Ժամկետը» շարադրել նոր խմբագրությամբ, համապատասխանաբար՝ «Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 40 օրացուցային օրվա ընթացքում»:
2. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ | «Բրիդջ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 | ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 51փ., 9շ., բն. 36 |
| Թիվ 1 Տարածքային Գանձապետական Բաժին | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ՝ 900018002825 | Հ/Հ՝ 2050922023451001 |
| ՀՎՀՀ՝ 00144572 | ՀՎՀՀ՝ 00143175 |
| Տնօրեն՝ _________ Կ. Ղազարյան (ստորագրություն) Կ.Տ. | Տնօրեն՝ _________ Ն. Չախոյան /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
«08» փետրվարի 2022թ. կնքված
ԿԴՄՀՀ-ԲՄԱՊՁԲ-22/4-1 ծածկագրով պայմանագրի
«24» 03 2022թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 31711220 | Կառավարման ծրագրային ապահովմամբ ինֆորմացիոն ցուցատախտակ LED էկրաններով (նախատեսված փակ տարածքների համար) | - | - | 60000000 | 60000000 | 60000000 | 60000000 | 60000000 | 60000000 | 60000000 | 60000000 | 60000000 | 60000000 | 60000000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ | «Բրիդջ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 | ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 51փ., 9շ., բն. 36 |
| Թիվ 1 Տարածքային Գանձապետական Բաժին | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ՝ 900018002825 | Հ/Հ՝ 2050922023451001 |
| ՀՎՀՀ՝ 00144572 | ՀՎՀՀ՝ 00143175 |
| Տնօրեն՝ ____________ Կ.Ղազարյան | Տնօրեն՝ ____________ Ն. Չախոյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |